

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 Նշվածներից ո՞րն է հասարակական աշխարհագրության ճյուղ:


- 1) երկրաբանությունը
- 2) կլիմայագիտությունը
- 3) երկրագրությունը
- 4) ջրաբանությունը

2 Որքա՞ն կլինի Երևանի և Հարավային արևադարձի միջև եղած հեռավորությունը:

- 1) 63,5°
- 2) 93,5°
- 3) 103,5°
- 4) 113,5°

3 Նկար 1.- ում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:

- 1) հասարակածային
- 2) գլանային
- 3) ազիմուտային
- 4) կոնային



նկար 1.

4 Քանի՞ շրջանակ ունի տեղագրական քարտեզը:

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

5 Ո՞ր գործիքով են չափում գետերի երկարությունները տեղագրական քարտեզի վրա:

- 1) կուրվիմետր
- 2) պալետկա
- 3) կողմնացույց
- 4) պլանիմետր

6 Ո՞ր երկու շերտերի միջև է գտնվում թույլլուրտը:

- 1) միջին միջնապատյանի և ստորին միջնապատյանի
- 2) ստորին միջնապատյանի և արտաքին միջուկի
- 3) երկրակեղևի և միջին միջնապատյանի
- 4) արտաքին միջուկի և ներքին միջուկի

7 Ո՞ր դարաշրջանում է երկրակեղևը կրել կալեդոնյան ծալքավորության ազդեցությունը:

- 1) Պրոտերոզոյան
- 2) Կայնոզոյան
- 3) Պալեոզոյան
- 4) Մեզոզոյան

8 Մթնոլորտի ձևավորման պահին ո՞ր գազն է բացակայել:

- 1) ազոտ
- 2) ածխաթթու գազ
- 3) օզոն
- 4) ջրային գոլորշի

9 Ո՞ր պլատֆորմի վրա է ձևավորվել Անգարիդա մայրցամաքը:

- 1) Ավստրալական
- 2) Սիբիրական
- 3) Հնդկական
- 4) Չինական

10 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Քամու միջոցով նավարկում են առազաստանավերք:
- 2) Քամու միջոցով արտադրվում է էլեկտրաէներգիա:
- 3) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:
- 4) Քամիներն առաջացնում են ցունամիներ:

11 Նշված ուղղությունների քամիներից որո՞նք կայուն չեն:

- 1) արևմտյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) արևելյան
- 4) հարավարևելյան

12 Ո՞ր կլիմայական գոտում է տարածվում տայգան.

- 1) բարեխառն
- 2) արկտիկական
- 3) արևադարձային
- 4) հասարակածային

13 **Բնութագրումով որոշել բնական զոնան.**

*Այս բնական զոնան ունի լավ արտահայտված երկու սեզոն՝ խոնավ, տաք ամառներ, տաք և չոր ձմեռներ: Լայն տարածում ունի Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում: Ո՞ր բնական զոնան է.*

- 1) տափաստան
- 2) սավաննա
- 3) տունդրա
- 4) անապատ

14 **Միջերկրածովային կոշտատերև անտառները և թփուտները հիմնականում ո՞ր հողերի վրա են տարածվում.**

- 1) կարմրագորշ
- 2) դարչնագույն
- 3) մոխրագորշ
- 4) պողոզլային

15 **Ո՞ր աշխարհամասում է գտնվում Սուդանի սարահարթը:**

- 1) Ասիա
- 2) Աֆրիկա
- 3) Ավստրալիա
- 4) Անտարկտիկա

16 **Ո՞ր գույգի կղզիներն են գտնվում Միջերկրական ծովում.**

- 1) Հոնսյու և Կալիմանտան
- 2) Սուլավեսի և Ճամայկա
- 3) Հոկայդո և Մադագասկար
- 4) Սարդինիա և Կորսիկա

17 **Աֆրիկայի գետերից ո՞րն է թափվում Հնդկական օվկիանոս:**

- 1) Զամբեզի
- 2) Օրանժ
- 3) Նեդոս
- 4) Նիգեր

18 Ընտրել Աֆրիկայի բնական զոնաների և այն ընդգրկող կլիմայական գոտիների համապատասխանությունների ճիշտ շարքը.

ա. մշտականաչ կոշտատերև անտառ  
բ. մշտադալար խոնավ անտառ  
գ. սավանա և նոսրանտառ  
դ. անապատներ և կիսանապատներ

1. հասարակածային կլիմայական գոտի  
2. մերձհասարակածային կլիմայական գոտի  
3. արևադարձային կլիմայական գոտի  
4. մերձարևադարձային կլիմայական գոտի

- 1) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 2) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-4, բ-1, գ-2, դ-3

19 Ո՞ր ծովն է ողողում Անտարկտիդայի ափերը

- 1) Համագործակցության ծով
- 2) Կորալյան ծով
- 3) Միջերկրական ծով
- 4) Սարգասյան ծով

20 Հյուսիսային Ամերիկայի գետերից ո՞րն է թափվում Հյուսիսային սառուցյալ օվկիանոս:

- 1) Մակենզին
- 2) Միսիսիպին
- 3) Կոլորադոն
- 4) Յուկոնը

21 Ո՞ր կենդանին է մեծամասամբ ապրում Ավստրալիայում:

- 1) պանդա
- 2) բադակտուց
- 3) բիզոն
- 4) անակոնդա

22 Հյուսիսային Ամերիկայի մերձարևադարձային մշտականաչ անտառների ու թփուտների բնական զոնայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մթնոլորտային տեղումներն առավելապես թափվում են ամռանը:
- 2) Հողային ծածկում գերակշռում են պողոզլային հողերը:
- 3) Տարածված բուսատեսակներից է հսկա սեքվոյան:
- 4) Տարածված կենդանատեսակներից է կոնդորը:

23

**Եվրասիայի կլիմայական գոտիների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն կլիմայական գոտու տարածքը:
- 2) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է մերձարևադարձային կլիմայական գոտու տարածքը:
- 3) Մերձհասարակածային կլիմայական գոտին տարածվում է Չինաստանի հարավ-արևելքում, Հնդկաչինում, Հնդստանում, Ֆիլիպինների հյուսիսում:
- 4) Հասարակածային կլիմայական գոտին զբաղեցնում է միայն Արաբական թերակղզու տարածքը:

24

**Եվրասիայի նշված գործող հրաբուխներից ո՞րն է ամենաբարձրը:**

- 1) Վեզուվ
- 2) Անակ Կրակատաու
- 3) Նեմրութ
- 4) Կլուչևսկայա սոպկա

25

**Ո՞ր լիճն է ամենաբարձրադիրը:**

- 1) Տիտիկակա
- 2) Պոոպո
- 3) Մարակայբո
- 4) Վերին

26

**Նշված բնական զոնաների տեղային անվանումներից ո՞րը բնորոշ չէ Հարավային Ամերիկային:**

- 1) պարամոս
- 2) կամպոս
- 3) պրերիա
- 4) լյանոս

27

**Նշվածներից ո՞ր երկիրն է եգիպտացորենի հայրենիքը:**

- 1) Չինաստան
- 2) Եգիպտոս
- 3) Հնդկաստան
- 4) Մեքսիկա

28

Նշված համաշխարհային արդյունաբերության ճյուղերից ո՞րն է առաջատար արտադրանքի արժեքի մեծությամբ.

- 1) մեքենաշինությունը
- 2) էլեկտրաէներգետիկան
- 3) մետաղաձուլությունը
- 4) թեթև արդյունաբերությունը

29

Նշված երկրներից ո՞րն աշխարհում առաջատար չէ մարիկուլտուրայի զարգացման մակարդակով.

- 1) Ֆրանսիա
- 2) Շվեյցարիա
- 3) Թաիլանդ
- 4) Ֆիլիպիններ

30

Բնութագրումով որոշել երկիրը.


*Այս ասիական պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աճեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով, Հարավարևմտյան Ասիայի ամենաանտառաշատ պետությունն է:*

- 1) Ադրբեջան
- 2) Հորդանան
- 3) Վրաստան
- 4) Լիբանան

31

Համաշխարհային տրանսպորտի ճյուղերից ո՞րի միջոցով է կատարվում համաշխարհային ուղևորափոխադրումների կեսից ավելին:

- 1) ավտոճանապարհային
- 2) երկաթուղային
- 3) գետային
- 4) օդային



քարտեզ 1

32 Ո՞ր պետությունն է քարտեզ 1-ում նշված Ե տառով.

- 1) Էստոնիա
- 2) Լատվիա
- 3) Լիտվա
- 4) Մոլդովա

33 Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1-ում նշված Է տառով.

- 1) Օսլո
- 2) Տալլին
- 3) Ռիգա
- 4) Փարիզ

34

Կենտրոնական Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աղքատ է ոսկու պաշարներով:
- 2) Տրանսպորտային ցանցը խիտ է:
- 3) Հարուստ է միրաբիլիտի պաշարներով:
- 4) Բնակչության միջին խտությունը շատ բարձր է:

35

Մշակաբույսերից որի՞ մշակությամբ է Բրազիլիան աշխարհում գրավում առաջին տեղը.

- 1) կակաոյի
- 2) բամբակենու
- 3) սուրճի
- 4) արևածաղկի

36

Աֆրիկայի ո՞ր երկրները ելք չունեն դեպի ծով.

- 1) Նիգեր և Ռուանդա
- 2) Թունիս և Մարոկկո
- 3) Գանա և Մավրիտանիա
- 4) Մոզամբիկ և Տանզանիա

37

Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհի ամենախիտ բնակեցված երկրներից է:
- 2) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 3) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Օսական է:
- 4) Շաքարի ճակնդեղի ցանքերն զբաղեցնում են երկրի մշակվող հողերի մոտ կեսը:

38

Ափագծերի երկարությամբ Կանադան աշխարհում ո՞ր տեղն է գրավում:

- 1) չորրորդ
- 2) երրորդ
- 3) երկրորդ
- 4) առաջին

39

Հարավարևելյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Նավթի արդյունահանման ծավալով առաջատար երկրներից է Ինդոնեզիան:
- 2) Անագի արդյունահանման ծավալներով առաջատարներից է Մալայզիան:
- 3) Մանիլի արտադրության ծավալով տարածաշրջանն աշխարհում առաջատարներից է:
- 4) Տարածաշրջանի ամենազարգացած երկրներից են Լաոսն ու Կամբոջան:

40

Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնական գազի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:
- 2) Էլեկտրաէներգետիկայում ամենամեծ բաժինը պատկանում է ջրաէլեկտրակայաններին:
- 3) Նավթի հիմնական պաշարները տեղաբաշխված են Կուզբասի, Կանսկ-Աչինսկի ավազաններում:
- 4) Ոսկու արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է Կոլա թերակղզում:

41


Ինչպիսի՞ ծագման լճեր չկան Հայկական լեռնաշխարհում.

- 1) սառցադաշտային
- 2) մնացորդային
- 3) տեկտոնահրաբխային
- 4) փլվածքային

42

Հայկական լեռնաշխարհի խոշոր գետերից ո՞րն է թափվում Սև ծով:

- 1) Ճորոխ
- 2) Եփրատ
- 3) Արաքս
- 4) Տիգրիս



քարտեզ 2

43

Քարտեզ 2–ում Արագածոտնի մարզը  $n^{\circ}$  թ տառով է նշված:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

44

Քարտեզ 2–ում Աշտարակ քաղաքը  $n^{\circ}$  թ տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

45

ՀՀ մակերևույթի վերաբերյալ  $n^{\circ}$  թ պնդումն է *սխալ*.

- 1) Ծաղկունյաց լեռների ամենաբարձր գագաթը Թեղենիսն է:
- 2) Փամբակի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը Թեժ լեռն է:
- 3) Վայոցսարից մինչև Արաքսի հովիտ ձգվում է Զանհգեզուրի լեռնաշղթան:
- 4) Ախուրյանի և Փամբակի հովիտների միջև է գտնվում Շիրակի լեռնաշղթան:

46

ՀՀ–ում  $n^{\circ}$  թ մարզն է ամենախտաբնակը:

- 1) Սյունիքը
- 2) Լոռին
- 3) Արմավիրը
- 4) Շիրակը

47

ՀՀ արդյունաբերության վերաբերյալ  $n^{\circ}$  թ պնդումն է ճիշտ.

- 1) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է միայն սև մետաղների առկայությամբ:
- 2) Մետաղաձուլության մասնագիտացված ուղղություններից է պղնձի արտադրությունը:
- 3) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 4) Ալյումինի արտադրությունը բացառապես օգտագործում է տեղական հումքը:

48

$n^{\circ}$  թ մարզով անցնող երկաթուղագծի երկարությունն է առավել երկար.

- 1) Սյունիք
- 2) Վայոց ձոր
- 3) Լոռի
- 4) Արարատ

49

**Կոտայքի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:
- 2) Տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
- 3) Հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է:
- 4) Հողային ծածկույթում գերակշռում են կիսաանապատային հողերը:

50

**Գեղարքունիքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաձյուղը զարգացած չէ.**

- 1) ծխախոտի մշակությունը
- 2) հացահատիկի մշակությունը
- 3) կարտոֆիլագործությունը
- 4) բանջարեղենի մշակությունը

51

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Անտառներն ունեն ջրապաշտպան, հողապաշտպան, դաշտապաշտպան, կլիմաստեղծ նշանակություն:
- 2) Անտառների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում է հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը:
- 3) Բուսականությունը մասնակցում է նյութերի և էներգիայի համամոլորակային շրջապտույտին:
- 4) Մարդու տնտեսական գործունեության պատճառով բնական անտառները չեն կրճատվում:

52

**Նշված միջազգային կազմակերպություններից ո՞րն է զբաղվում ատոմային էներգիայի ուսումնասիրությամբ և բնակչության ճառագայթային անվտանգության ապահովման հարցերով:**

- 1) ՅՈՒՆԵՄԿՈ
- 2) ՅՈՒՆԵՊ
- 3) ՄԱԳԱՏԵ
- 4) ԲՊՄՄ

53

**Նշվածներից ո՞րը հողաբարելավման միջոցառում չէ:**

- 1) ոռոգում
- 2) քարամաքրում
- 3) անտառապատում
- 4) կլիմայավարժեցում

54

**Նշվածներից ո՞րի միջոցով ջրավազաններում ջրի որակը չեն ստուգում:**

- 1) կենսաբանական
- 2) ֆիզիկաքիմիական
- 3) միկրոկենսաբանական
- 4) բուսատեխնոլոգիական

55

Նշվածներից ո՞ր փուլն է սկսվել մոտ 10 000 տարի առաջ և ավարտվել 3000 տարի առաջ:

- 1) հնագույն
- 2) հին
- 3) ժամանակակից
- 4) նոր

56

Գրել այն պետությունների համարները, որոց պետական կառավարման ձևը բացարձակ միապետական է:

- |             |            |
|-------------|------------|
| 1) Դանիա    | 5) Քուվեյթ |
| 2) Օման     | 6) Շվեդիա  |
| 3) Նորվեգիա | 7) Բելգիա  |
| 4) Կատար    | 8) Իսպանիա |

57

Գրել այն պետությունների համարները, որոնք ելք չունեն դեպի ծով:

- |          |              |
|----------|--------------|
| 1) ՌԴ    | 5) Կանադա    |
| 2) Չեխիա | 6) Չադ       |
| 3) ԱՄՆ   | 7) Շվեյցարիա |
| 4) ՀԱՀ   | 8) Չիլի      |

58

Գրել այն պետությունների համարները, որոնց պետական տարածքային կառուցվածքը միասնական է:

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Հայաստան | 5) Հնդկաստան |
| 2) Կանադա   | 6) ԱՄՆ       |
| 3) Բրազիլիա | 7) ՌԴ        |
| 4) Գերմանիա | 8) Իրան      |

59

Գրել այն լեզուների համարները, որոնք մտնում են սլավոնական լեզվախմբի մեջ.

- |              |              |
|--------------|--------------|
| 1) լեհերեն   | 5) չեխերեն   |
| 2) վրացերեն  | 6) պարսկերեն |
| 3) շվեդերեն  | 7) ռուսերեն  |
| 4) էստոներեն | 8) հայերեն   |

60

Գրել այն երկրների համարները, որոնք իրենց տնտեսության զարգացման մակարդակով հետինդուստրիալ փուլում են:

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Հնդկաստան | 5) Թուրքիա   |
| 2) Ինդոնեզիա | 6) Անգոլա    |
| 3) Գերմանիա  | 7) Ֆինլանդիա |
| 4) Ֆրանսիա   | 8) Ճապոնիա   |

61) Գրել այն խոշոր գետների համարները, որոնց շուրջը ձևավորվել են հնագույն ու հայտնի քաղաքակրթություններ:

- |            |            |
|------------|------------|
| 1) Տիգրիս  | 5) Նեղոս   |
| 2) Եփրատ   | 6) Ինդոս   |
| 3) Կոնգո   | 7) Պարանաս |
| 4) Զամբեզի | 8) Օրանժ   |

62) Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել ըստ դրանց վտակների վրա գտնվող ջրվեժների հետևյալ հաջորդականությամբ՝ Ջերմուկի, Շաքիի, Թոշկանի.

- 1) Փամբակ                      2) Որոտան                      3) Արփա

63) Տրված ՀՀ ազգերը դասավորել բնակչության թվի նվազման կարգով.

- 1) եզդիներ
- 2) հայեր
- 3) ռուսները
- 4) ասորիները

(64-65). Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 360 մմ է, օդի ջերմաստիճանը՝  $-5^{\circ}\text{C}$ , իսկ ստորոտին՝  $+10^{\circ}\text{C}$  (հաշվարկը կատարել  $5^{\circ}$ -ով).

64) Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

65) Որոշել մթնոլորտային ճնշումը ստորոտում:

(66-67) Քաղաքի բնակչության թիվը 90 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 2000 մարդ: Եկամտների թիվը 6000 մարդ է, մեկնամեկնաճների թիվը՝ 2000 մարդ.

66 Որոշել միգրացիայի մնացորդը:

67 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

68 Երկրի նավթի պաշարները կազմում են 2,4 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 120 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսաապահովվածությունը:

69

**Ֆրանսիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 2) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենափոքր բաժինը զբաղեցնում է սպասարկման ոլորտը:
- 3) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:
- 4) Մսի, կաթի, ցորենի, եգիպտացորենի և շաքարի ճակնդեղի արտադրության ծավալով Եվրոպայում առաջինն է:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 6) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:

70

**ՀՀ Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Առկա են քրոմիտի և ոսկու պաշարներ:
- 2) Այստեղ է գտնվում Սևանի ստորգետնյա ջրաէլեկտրակայանը
- 3) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է:
- 4) Հողածածկույթում գերակշռում են լեռնաանտառային գորշ հողերը:
- 5) Անասնապահության առաջատար ճյուղն է խոզաբուծությունը:
- 6) Մարզի գյուղերում է ապրում բնակչության մեկ երրորդը: